ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«10» հունիսի 202 թ. № 623 Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 358.2-րդ հոդվածի 1-ին մասը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 21.01.2022թ. N2 որոշման հավելվածի 2-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հետագծելիության ենթակա ապրանքների գույքագրման ակտի ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի

2022 թ. հունիսի 10 -ի N 623 -Լ հրամանի

ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ	Փաստաթղթի հերթական համարը _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)							
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
2. Հարկ վճարողի անվանումը								
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)								
4. Հարկ վճարողի հեռախոսահամարը								

5. Տեղեկատվություն հետագծելիության ենթակա _____ թ. դրությամբ առկա ապրանքների մնացորդների վերաբերյալ

ՀՀ	Ձեռքբերման փաստաթղթի համարը	Ապրանքի հերթական համարը ըստ ձեռքբերման փաստաթղթի	Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքի քանակը	Ապրանքի չափման միավորը
5.1	5.2	5.3	5.4	5.5	5.6	5.7

Պատասխանատու անձի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ
ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԻ

1. Հետագծելիության ենթակա ապրանքների գույքագրման ակտի ձևը (այսուհետ՝ գույքագրման ակտ) լրացվում և ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) համապատասխան հետագծելիության ենթակա ապրանքների մասով:

2. Գույքագրման ակտի 1-ին կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

3. Գույքագրման ակտի 2-րդ կետում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ «ԱՁ» նշումը և անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:

4. Գույքագրման ակտի 3-րդ կետում լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման վայրը, իսկ հաշվառման վայրի բացակայության դեպքում փաստացի բնակության վայրը):

5. Գույքագրման ակտի 4-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հեռախոսահամարը:

6. Գույքագրման ակտի 5.2-րդ սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռքբերված՝ հետագծելիության ենթակա ապրանքների մասով մատակարարների կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթի (հարկային հաշիվ, ճշգրտող հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր, ճշգրտող հաշիվ վավերագիր) սերիան և համարը, իսկ ներմուծողի մոտ առկա հետագծելիության ենթակա ապրանքների մասով՝ մաքսային հայտարարագրի գրանցման համարը:

7. Գույքագրման ակտի 5.3-րդ սյունակում լրացվում է հետագծելիության ենթակա ապրանքի հերթական համարը՝ հաշվարկային փաստաթղթին կամ մաքսային հայտարարագրին համապատասխան:

8. Գույքագրման ակտի 5.4-րդ սյունակում լրացվում է ապրանքի անվանումը՝ հաշվարկային փաստաթղթին կամ մաքսային հայտարարագրին համապատասխան:

9. Գոյքագրման ակտի 5.5-րդ սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան:

10. Գոյքագրման ակտի 5.6-րդ սյունակում լրացվում է հաշվարկային փաստաթղթում կամ մաքսային հայտարարագրում նշված հետագծելիության ենթակա ապրանքի մնացորդի քանակությունը՝ 5.7-րդ սյունակում նշված չափման միավորին համապատասխան:

11. Գոյքագրման ակտի 5.7-րդ սյունակում լրացվում է հետագծելիության ենթակա ապրանքի մասով Համաձայնագրով նախատեսված քանակական չափման միավորը: